ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ ԱԻ-1042
«03» 04 2026 թ.

# ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԴՐՈՇԱԿԱՁՈՂԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38»

ք.Աբովյան «03» 04 2026 թ.

Աբովյանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Բաբայանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բոռսա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

**3.2.5** Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել տասը օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **մեկ տարի**: Եթե

Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված

փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **12 800 100 (տասներկու միլիոն ութ հարյուր հազար հարյուր) ՀՀ դրամ, որից 2 133 350 (երկու միլիոն հարյոր երեսուներեք հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝**

**ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).**

**ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.**

**ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.**

**ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:**

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

---

խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 * Յուրաքանչյուր կատարողական ակտի հետ ներկայացնել կատարված աշխատանքների ծավալները հիմնավորող կատարողական գծագրերը, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների վերաբերյալ կազմված եզրակացությունները, ընդ որում պատվիրատուի ներկայացուցչին նախապես տեղեկացնել նմուշառում իրականացնելուց վերաբերյալ: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը * | Խախտումը վերացնելու համար տրամադրվող ժամկետները | Խախտումը կրկնվելու դեպքում տրամադրվող ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 1 օր | 1) Շին. աղբի մասով – Չի տրամադրվում<br>2) Կենցաղային թափոնների և օտար առարկաների մասով – 1 օր |
| 2 | Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված և/կամ համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված թույլատվության դեպքերում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | Չի տրամադրվում | Չի տրամադրվում |
| 3 | Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | Չի տրամադրվում | Չի տրամադրվում |
| 4 | Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 5 օր | Չի տրամադրվում |
| 5 | Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 1) Նշանների մասով – 3 օր<br>2) Լուսաազդանշանային առկայծող լապտերների մասով - առավելագույնը – 12 ժամ | 1) Թեքված, ծռված, վնասված, բացակայող ճանապարհային նշանների վերականգնման համար – 1 օր:<br>2) Վնասված լուսաազդանշանային առկայծող լապտերների վերականգնման համար – 4 ժամ: |
| 6 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 4 ժամ | 1 ժամ |
| 7 | Շինարարական սորուն նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | Չի տրամադրվում | Չի տրամադրվում |
| 8 | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 24 ժամ | 4 ժամ |
| 9 | Պահպանված չեն շինարարական նորմերը, աշխատանքները ընթանում են շինարարական նորմերի խախտումներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 24 ժամ | Չի տրամադրվում |
| 10 | Չի պահպանվում օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների ժամանակագրությունը և հերթականությունը | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | Չի տրամադրվում | Չի տրամադրվում |

Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կամ պատվիրատուի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա կամ պատվիրատուի նախաձեռնությամբ:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ

ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, Ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Աբովյանի համայնքապետարան | «Բոռսա» ՍՊԸ |
| Ք.Աբովյան, Բարեկամության հր.1 | ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Երևանյան խճուղի 141 |
| բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ | Բանկ՝ ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900102405066 | ՀՀ 16028029343400 |
| ՀՎՀՀ 03561498 | ՀՎՀՀ 03031875 |
| Համայնքի ղեկավար՝ Է. Բաբայան | |
| Է. Բաբայան ------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | Գ.Պողոսյան ------------------------ /ստորագրություն/ Կ.Տ. |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 03 » 04 2026թ. կնքված
ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38 ծածկագրով պայմանագրի

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

### ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԴՐՈՇԱԿԱՁՈՂԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

**Установка флагштока и флага РА в городе Абовян общины Абовян**

| NN | Աշխատանքների անվանումը | Наименование работ | չափման միավոր | единица измерения | Ծավալը Объем | Միավորի արժեքը Стимость единицы | Ընդամենը Итого (հազար դրամ/ тысяча драм) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | **դրոշակաձող** | **флагшток** | | | | | |
| 1 | Փորրակի փորում | Рытье котлована | մ³ | м³ | 75,6 | 0,694 | 52,4664 |
| 2 | Հետադարձ լիցք | Обратная засыпка | մ³ | м³ | 42 | 1,817 | 76,314 |
| 3 | Տեղափոխում թափոնարան | Переводка в отвал | մ³ | м³ | 33,6 | 1,602 | 53,8272 |
| 4 | Բետոն B15 | Бетон B15 | մ³ | м³ | 1,8 | 49,646 | 89,3628 |
| 5 | Ծանր Բետոն B25 | Тяжолий Бетон B25 | մ³ | м³ | 32 | 64,472 | 2063,104 |
| 6 | Երկշերտ բիտումային քսուկ | Битумная мастика 2 слоя | մ² | м² | 48 | 1,13 | 54,24 |
| 7 | Չկծկվող բետոն B25 | Неусадочный бетон B25 | մ³ | м³ | 0,2 | 53,124 | 10,6248 |
| 8 | Ø32A500c ГОСТ Р 52544-2006 | Ø32A500c ГОСТ Р 52544-2006 | կգ | кг | 291 | 0,366 | 106,506 |
| 9 | Ø16A500c ГОСТ Р 52544-2006 | Ø16A500c ГОСТ Р 52544-2006 | կգ | кг | 1535 | 0,366 | 561,81 |
| 10 | Ø8A240 ГОСТ 5781-82 | Ø8A240 ГОСТ 5781-82 | կգ | кг | 579 | 0,334 | 193,386 |
| 11 | Ø920x10 ГОСТ 10704-91 | Ø920x10 ГОСТ 10704-91 | կգ | кг | 1638,2 | 1,072 | 1756,1504 |
| 12 | Ø820x8 ГОСТ 10704-91 | Ø820x8 ГОСТ 10704-91 | կգ | кг | 1200 | 1,06 | 1272 |
| 13 | Ø720x7 ГОСТ 10704-91 | Ø720x7 ГОСТ 10704-91 | կգ | кг | 916 | 1,068 | 978,288 |
| 14 | Ø530x6 ГОСТ 10704-91 | Ø530x6 ГОСТ 10704-91 | կգ | кг | 580 | 0,785 | 455,3 |
| 15 | -60 ГОСТ 19909-74 | -60 ГОСТ 19909-74 | կգ | кг | 924 | 0,877 | 810,348 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | -40 ГОСТ 19909-74 | -40 ГОСТ 19909-74 | կգ | кг | 1062 | 0,877 | 931,374 |
| 17 | -35 ГОСТ 19909-74 | -35 ГОСТ 19909-74 | կգ | кг | 792 | 0,877 | 694,584 |
| 18 | -30 ГОСТ 19909-74 | -30 ГОСТ 19909-74 | կգ | кг | 472 | 0,877 | 413,944 |
| 19 | -10 ГОСТ 19909-74 | -10 ГОСТ 19909-74 | կգ | кг | 908 | 0,877 | 796,316 |
| 20 | Հակակոռոզիոն ներկ | Антикоррозионная краска | մ$^2$ | м$^2$ | 90 | 0,316 | 28,44 |
| 21 | Հեղյուս, մանեկ, տափօղակ | Билт, гайка, шайба | կգ | кг | 88,9624 | 2,576 | 229,1671424 |
| | **Հիմք** | **Фундамент** | | | | | |
| 1 | B25 բետոն | Бетона B25 | մ$^3$ | м$^3$ | 18,24 | 64,076 | 1168,74624 |
| | **Գագաթ** | **Шпиль** | | | | | |
| 1 | Թիթեղ (0.5մմ հաստությամբ) տեղադրումը եռակցումով | Листовой металл (толщиной 0,5 мм) Установка сваркой | կգ | кг | 2,80 | 0,726 | 2,0328 |
| 2 | ՀՀ դրոշ 4x8մ Բարձր ամրության poliester 150գ/մ$^2$ | Флаг PA 4x8м poliester 150г/м$^2$ високой прочности | հատ | штук | 1,00 | 242,32 | 242,32 |
| 3 | Ձախարակ և ճոպան դրոշի համար ճոպան Æ 8 մմ - 55մ շերտապողպատ 50x10մմ - 6.2մ տեղադրումը եռակցումով ճախրանվակ Æ 200մմ - 3 հատ Մանեկ, հեղույս, տափօղակ - 2 կգ | Флагшток и трос для флага Трос Æ 8 мм - 55м Полоса 50x10мм - 6.2м Установка сваркойРолик Æ 200мм - 3 штук Гайка, болт, шайба - 2 кг | Կոմպ | кшмп | 1,00 | 56,157 | 56,157 |
| | **Մայթ** | **Тротуар** | | | | | |
| 1 | Նոր բազալտե 10x20սմ եզրաշարի տեղադրում ԳՕՍՏ 32018-2012, ԳՕՍՏ 32961-2014 - միաձույլ բետոն B-15 1գծմ-0.05 մ3 ԳՕՍՏ 32961-2014 – խճավազային շերտ ( C - 4 ) ԳՕՍՏ 25607-2009 h=5սմ-0.015 մ$^3$ | Установка новой базальтовой версти 10x20см ГОСТ 32018-2012, ГОСТ 32961-2014 - монолитный бетон B -15 1 п.м-0.05 м3 - шебеночно-песчаный слой( C - 4 ) ГОСТ 25607-2009 h=5см-0.015м$^3$ | գծմ | п.м. | 22,00 | 10,527 | 231,594 |
| 2 | Բետոնե սալիկների, ձևավոր տեղադրում, մոխրագույն h=6սմ ԳՕՍՏ 17608-2017 | Бет. плитки, серые, фигурные h=6см ГОСТ 17608-2017 | մ$^2$ | м$^2$ | 13,50 | 7,523 | 101,5605 |
| 3 | Ավազացեմենտային չոր խառնուրդ h=10սմ (90%- ավազ, 10%- ցեմենտ) | Песчано-цемента сухая смесю h=10см (90%- песок, 10%- цемент) | մ$^2$ | м$^2$ | 13,50 | 22,606 | 305,181 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Խճային հիմք h=12սմ | Щебеночное основание h=12см | մ² | м² | 13,50 | 1,813 | 24,4755 |
| | **Լուսավորություն** | **освишение** | | | | | |
| 1 | Խողովակակ պրոֆիլային 80x80x3մմ(կանգնակ), L=1.5մ 10.7կգ | Трубчатый профиль 80x80x3 мм (подставка), длина 1,5 м, вес 10,7 кг. | հատ | штук | 4 | 5,742 | 22,968 |
| 2 | Խողովակակ պրոֆիլային 80x40x3մմ(լայնակ), L=0.8մ 4.3կգ | Трубчатый профиль 80x40x3 мм (ширина), длина = 0,8 м, вес 4,3 кг. | հատ | штук | 4 | 2,396 | 9,584 |
| 3 | Լայնակի եռակցում կանգնակին | Поперечная сварка к подставке | հատ | штук | 4 | 2,397 | 9,588 |
| 4 | օլիֆով պատում և նիտրոէմալով ներկում 2 շերտ | 2 слоя фольгированного покрытия и нитроэмалевая покраска. | մ² | м² | 2,7 | 1,763 | 4,7601 |
| 5 | Լուսարձակ Vizulo,article 60007063,Eagle 260W120LED,260Վտ հզորության,38718 լյում,148.9 լյում/1Վտ, IP65 | Прожектор Vizulo, артикул 60007063, Eagle 260W120LED, мощность 260 Вт, световой поток 38718 люмен, 148,9 люмен/1 Вт, степень защиты IP65. | հատ | штук | 4 | 354,163 | 1416,652 |
| 6 | 300(h)x300x150մմ պահարան դռնակով, ЩМП-30.30.15 | Шкаф с дверцей, 300(h)x300x150 мм, ЩМП-30.30.15 | հատ | штук | 1 | 58,956 | 58,956 |
| 7 | h-150մմ, L-300մմ մոնտաժային պանել, DIN-ձողով | Монтажная панель высотой 150 мм, длиной 300 мм, с DIN-рейкой. | հատ | штук | 1 | 6,668 | 6,668 |
| 8 | մոնտաժային պանելի ամրացման համար ուղղաձիգ կանգնակ, L-300մմ | Вертикальная подставка для монтажа панели, длина 300 мм. | հատ | штук | 2 | 6,275 | 12,55 |
| 9 | զրոյական ձող 8 անցք | нулевой стержень 8 отверстий | հատ | штук | 1 | 0,797 | 0,797 |
| 10 | հողանցման ձող 8 անցք | заземляющий стержень 8 отверстий | հատ | штук | 1 | 1,259 | 1,259 |
| 11 | ավտոմատ անջատիչ միաբևեռ C32Ա,mcb | Однополюсный автоматический выключатель C32A, MCB | հատ | штук | 1 | 7,462 | 7,462 |
| 12 | դիֆերենցիալ հոսանքի ավտոմատ անջատիչ 16Ա-30մԱ,mcb | Дифференциальный автоматический выключатель 16А-30мА, MCB | հատ | штук | 4 | 7,664 | 30,656 |
| 13 | սեղմակ KE10.504 Ensto | зажим KE10.504 Ensto | հատ | штук | 6 | 4,469 | 26,814 |
| 14 | 150x150x100 մմ ճյուղավորիչ տուփ Y995 | Распределительная коробка U995 размером 150x150x100 мм | հատ | штук | 4 | 2,962 | 11,848 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Մալուխ պղնձե ВВГ-3x1.5 | Медный кабель ВВГ-3x1.5 | մ | м | 10 | 0,635 | 6,35 |
| 16 | Մալուխ պղնձե ВВГ-3x2.5 | Медный кабель ВВГ-3x2.5 | մ | м | 60 | 0,838 | 50,28 |
| 17 | Մալուխ պղնձե ВВГ-2x4 | Медный кабель ВВГ-2x4 | մ | м | 40 | 0,882 | 35,28 |
| 18 | Մալուխ ալյումինե АВВГ-2x6 | Алюминиевый кабель АВВГ-2x6 | մ | м | 10 | 0,429 | 4,29 |
| 19 | Ճկախողովակ երկպատ 32/24.6մմ | Двустенный шланг 32/24,6 мм | մ | м | 55 | 1,236 | 67,98 |
| 20 | ПЭ100 ПНД SDR11 կոշտ խողովակ 75/6.8մմ | Жесткая труба PE100 HDPE SDR11 75/6,8 мм | մ | м | 24 | 2,096 | 50,304 |
| 21 | պողպատ անկյունային, 50x50x5մմ ,L=2մ | стальной уголок, 50x50x5 мм, длина = 2 м | հատ | штук | 2 | 4,954 | 9,908 |
| 22 | պողպատ շերտավոր, 40x4մմ | стальная полоса, 40x4 мм | մ | м | 5 | 1,143 | 5,715 |
| 23 | D40մմ անցքի բացում 4մմ պատի հաստությամբ պլղպատե խողովակի մեջ | Сверление отверстия диаметром 40 мм в ПВХ-трубе с толщиной стенки 4 мм. | հատ | штук | 2 | 0,22 | 0,44 |
| 24 | Բետոն B15 (ծանր) հիմքերի | Бетон B15 (тяжелый) для фундаментов | $մ^3$ | $м^3$ | 0,2 | 66,552 | 13,3104 |
| 25 | Խիճ | шебен | $մ^3$ | $м^3$ | 0,04 | 9,542 | 0,38168 |
| 26 | Գրունտի քանդում խրամուղում | Выемка грунта в траншее | $մ^3$ | $м^3$ | 7,5 | 3,557 | 26,6775 |
| 27 | Գրունտի քանդում փոսորակում | Выемка грунта в котловане | $մ^3$ | $м^3$ | 1,3 | 6,629 | 8,6177 |
| 28 | Գրունտի հետլիցք | Обратная засыпка грунтом | $մ^3$ | $м^3$ | 5,7 | 4,957 | 28,2549 |
| 29 | Ավազե անկողին | Песчаный слой | $մ^3$ | $м^3$ | 3 | 9,542 | 28,626 |
| 30 | 16սմ հաստության ասֆալտբետոնե շերտի կտրում ալմաստե սայրով | Резка слоя асфальтобетона толщиной 16 см алмазным диском. | մ | м | 45 | 0,398 | 17,91 |
| 31 | 40 սմ հաստության երթևեկելի մասի ասֆալտախծային ծածկի քանդում և տեղափոխում | Демонтаж и удаление асфальтового покрытия дорожного полотна толщиной 40 см. | $մ^3$ | $м^3$ | 2,6 | 10,379 | 26,9854 |
| 32 | Երթևեկիլի մասի ասֆալտախծային ծածկի վերականգնում | Восстановление асфальтового покрытия дорожного полотна. | $մ^2$ | $м^2$ | 6,6 | 17,188 | 113,4408 |

| | |
|---|---|
| **Ընդհանուրը**<br>**Общий** | **15874,933** |
| **ԱԱՀ** **20%**<br>**НДС 20%** | **3174,987** |

| | |
|---|---|
| **Ընդհանուրը**<br>**Общий** | **19049,920** |

4. Ըստ Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) հետևյալ ոլորտի՝

**Շինարարական աշխատանքները իրականացնելու ողջ ընթացքում կապալառու կազմակերպությունը պետք է ունենա «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2023թ. թիվ 2106-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված փաստաթղթերի փաթեթ՝ համաձայն հետևյալ աղյուսակի:**

| | |
|---|---|
| Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը | շինարարության իրականացում |
| Լիցենզիայի դաս և հավաստագրի կարգ | 1-ին կամ 2-րդ |
| Լիցենզիայի ծածկագիրը | 03 |
| Լիցենզիայի անբաժանելի մաս կազմող ներդիրի տեսակ | բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ |
| Ներդիրի համար | 04 |

**Երաշխիքային ժամկետ սահմանել 1 տարի**

***Կապալառուն բոլոր աշխատանքները պետք է իրականացնի համաձայնեցնելով պատվիրատուի հետ, կատարողական ակտերին կից պետք է ներկայացվի կատարողական գծագրեր, պետք է տրամադրվի ձեռք բերված նյութերի ծագման սերտիֆիկատները,գնման ապրանքագրերը և ծածկված ակտերը, վարվի շինարարության վարման մատյան: Ծավալաթերթը ներկայացված է նյութերը ներառյալ: Աշխատանքները պետք է ընթանան առնվազն 5 աշխատակցի ներգրավմամբ: Կապալառուի աշխատանքերը ղեկավարող աշղեկը պետք է ունենա համապատասխան մասնագիտական ունակություններ, որը հավաստվի կրթության վկայագրով և (կամ) մասնագիտական որակավորման հավաստագրով: Աշխատանքների իրականացման ընթացքում պետք է ապահովի տեխնիկական, սանիտարական, անվտանգության ապահովման, քաղաքացիների անխափան տեղաշարժի, ազդանշանային ժապավեններով սահմանազատումը, տեղեկատվական վահանակը:** Միևնույն ժամանակ կապալառուն աշխատանքների ընթացքում ապահովում է գոյություն ունեցող կոմունիկացիաների ինքնուրույն վերականգնումը: Միևնույն ժամանակ ավարտական փաստաթղթերը ներկայացնում է ամբողջությամբ, իրականացնում է համաձայնեցումներ և միացման հետ կապված փաստաթղթավորում շահագրգիռ կազմակերպությունների հետ, այդ թվում ԲԷՑ, ՀԷՑ, Վեոլիա ջուր, Գազպրոմ Արմենիա, Թիմ և այլն:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Աբովյանի համայնքապետարան<br>Ք.Աբովյան, Բարեկամության հր.1<br>բանկը՝ ՀՀ ֆին. նախարար. ԿԳ<br>Հ/Հ 900102405066<br>ՀՎՀՀ 03561498<br>Համայնքի ղեկավար՝ Է. Բաբայան | «Բոռսա» ՍՊԸ<br>ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան,<br>Երևանյան խճուղի 141<br>Բանկ՝ ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ<br>ՀՀ 16028029343400<br>ՀՎՀՀ 03031875 |
| Է. Բաբայան -----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | Գ.Պողոսյան ---------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված 1.1

« 03 » 04 2026թ կնքված
«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38» ծածկագրով պայմանագրի

**ՀԱՎԱՍՏՈՒՄ**

**իրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և տեղադրման պարտավորության մասին**

**«Բոռսա» ՍՊԸ-ն,** հավաստում է, որ «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Աբովյանի համայնքապետարան
Ք.Աբովյան, Բարեկամության հր.1
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102405066
ՀՎՀՀ 03561498
Համայնքի ղեկավար՝ Է. Բաբայան

Է. Բաբայան ----------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Բոռսա» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան,
Երևանյան խճուղի 141
Բանկ՝ ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
ՀՀ 1602802934З400
ՀՎՀՀ 03031875

Գ.Պողոսյան ----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Հավելված թիվ 2**
« 03 » 04 **2026թ. կնքված**
**«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38» ծածկագրով պայմանագրի**

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքներ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքներ | Պատվիրատուի կողմից գրավոր ծանուցելու օրվանից | Պատվիրատուի կողմից գրավոր ծանուցելու օրվանից 120-րդ օրացուցային օրը ներառյալ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պատվիրատուի կողմից գրավոր ծանուցելու օրվանից | Պատվիրատուի կողմից գրավոր ծանուցելու օրվանից 120-րդ օրացուցային օրը ներառյալ |

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքներ**

| No | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը 2026թ |
|---|---|---|
| | | Կատարման ժամկետը օրերով |
| 1 | Հողային աշխատանքներ | 20 |
| 2 | Դրոշի կառուցում | 90 |
| 3 | Լուսավորություն | 110 |
| 4 | Մայթեր | 120 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 120 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Աբովյանի համայնքապետարան
Ք.Աբովյան, Բարեկամության հր.1
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102405066
ՀՎՀՀ 03561498
Համայնքի ղեկավար՝ Է. Բաբայան

Է. Բաբայան ----------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Բոռսա» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան,
Երևանյան խճուղի 141
Բանկ՝ ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
ՀՀ 16028029343400
ՀՎՀՀ 03031875

Գ.Պողոսյան ----------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Հավելված N 3**
« 03 » 04 **2026թ. կնքված**
«ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38» **ծածկագրով պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231214 | Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքներ | | | | 3840030 | 7680060 | 12800100 | 12800100 | 12800100 | 12800100 | 12800100 | 12800100 | 12800100 | 12800100 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Աբովյանի համայնքապետարան
Ք.Աբովյան, Բարեկամության հր.1
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102405066
ՀՎՀՀ 03561498
Համայնքի ղեկավար՝ Է. Բաբայան

Է. Բաբայան ------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Բոռսա» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան,
Երևանյան խճուղի 141
Բանկ՝ ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
ՀՀ 1602802934340
ՀՎՀՀ 03031875

Գ.Պողոսյան ------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.